

Հ. Կորկոնյան

Արտգովի


Տարբերակ

1

796.5  
4-78

1934

25 OCT. 2010



Զ. ԿՈՐԿՈՅԵԱՆ

# ԱՐԱԳԱՆԻ ՄԱՐԶՈՒՏՆԵՐ

796.5  
4-78

ՊԵՏՀՐԱՍ — ՅԵՐԵՎԱՆ

1934

23 MAY 2013

ՀԱԽՀ ՊՐՈԼԵՏԱՍՈՒՐԻ ՀՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՕՊՏԵ)

Զ. ԿՈՐԿՈՑՅԱՆ

796.5

4-78

# ԱՐԱԳԱՆԻ ՄԱՐՁՐՈՒՏՆԵՐ



458  
38

1934

1934  
ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

թափվեն ու գգվեն իրենց հյուրին, իրենց գըր-  
կում հանգստացողին:

Քայլել ծաղիկների միջով, յերփներանդ դա-  
լար գորգերի վրայով, անուշանոտ բուրմունքնե-  
րով լի շրջապատում, ծծել լեռնային ջինջ ողը,  
շնչել վոչ միայն թթվածինը, այլ և ողոնացած  
թթվածինը:

Քայլել զեփյուռների նվազի տակ, ամպերի  
քուլաների միջով, կախվել յերկնքի ու յերկրի միջև:

Քայլել չինկիլ քարերի վրայով, լսել «գըռոգո»  
ձայներ ու շփոթվել, չիմանալ թե դա ինչ նվազ  
է, արդյոք քամին ե ճգնում պահվել չինկիլ քա-  
րերի արանքում ու, տեղ չգտնելով, գուրս ե սլա-  
նում թունելից գուրս յեկող շոգեշարժի նման  
սուրալով, թէ չինկիլների տակից ջրերն են սա-  
հանքներով ցած վագում:

Քայլել աղբյուրների մոտով, խմել պաղ ջրեր  
ու այդ բոլորի մեջ մոռանալ ուտելը. չե՛ վոր ողն  
ու ջուրը, ծաղկի բուրմունքն ու վայելքը խառ-  
նվելով կազմում են քիմիական նոր բաղադրու-  
թյուն, վորն ունի իր կալորիան, իր վիտամինը:

Քայլել 50 մետրից բարձր ջրվեժի մոտով, մա-  
քուր ծծմբի տարածությունների միջով:

Քայլել ու զիտել պանորամա վոտքի տակ,  
պանորամա աչքի առջև վերևում և՝ պանորամա  
հետաղարձ հայացքի համար՝ ներքեսում, ուր դաշ-  
տերն ու զյուղերն են փովել յեղերելով լեռնա-  
շղթաների պարեգոտիով:

Քայլել ու զիտել հարյուրավոր կիլոմետր հեռու  
մշուշի մեջ պահվող քաղաքներն ու գյուղերը, գոր-  
ծարաններն ու հիգրոկայանները:

Քայլել ու դիտել ներքեռում կուզ յեկած և  
հունի մեջ գալարվող ցամաքած գետերն ու վտակ-  
ները և դրանց հակադիր՝ խորհրդային լայնանիստ  
ջրանցքներն ու առուները:

Քայլել ու տեսնել նյութական կուլտուրայի  
մնացորդներն ու դեպի պատմության գիրկը նետ-  
վող քոչվորական կենցաղը:

Քայլել քոչվորների վրանների միջով, լսել  
գառների մայունը, յերեխաների կանչը, շների հա-  
ջոցը: Ախորժակով ուտել զոշխարի պանիրը, կովի  
կարաղը ու գոմեշի մածունը: Ուսումնասիրել քոչ-  
վորի կյանքը ու նրան հակադիր՝ խորհրդային  
անասնապահական տնտեսությունը:

Քայլել յերանավետ վայրերով, փնտոել, հե-  
տախուզել և գտնել նորանոր դեղաբույսեր ու  
ծաղիկներ, հանքեր ու թանգարժեք քարեր:

Քայլել կանաչ գորգերի վրայով՝ ուսումնա-  
սիրելու համար յերկրի փուփածքը, լանդշաֆտը,  
ջրային սիստեմը: Մտքով ընդգրկել յերկրորդ ու  
հետագա հնդգամյակների խնդիրները և փնտոել  
նրանց լուծումը:

Քայլել բանաստեղծելով և բուրմունքների մի-  
ջով փորոնել ոգտակարը՝ հաճույքի հետ ընդե-  
լուզված:

Անա այն բոլորը, վոր կարելի յե տեսնել Արա-  
գածի վրա և վորը կազմելու յե դեպի Արագած  
մարշրուտների յելակետը:

Տուրիստ, յեթե փնտում ես ահեղ ժայռեր՝  
վեր մագլցելու համար, մի գնա Արագած, այնտեղ  
այդպիսի ժայռեր չկան:

Տուրիստ, յեթե փնտում ես սառցադաշտեր՝

ալպյան կոշիկներով ու ձյունափայտներով նրանց  
վրայով քայլելու համար, մի գնա Արագած, այն-  
տեղ այդպիսի սառցադաշտեր չկան:

Տուրիստ, յեթե փնտում ես ձյունապատ  
գագաթներ կամ սառցնող քամիներ, մի գնա Արա-  
գած, այնտեղ այդպիսի քամիներ ու գագաթներ  
չկան:

Բայց յեթե, տուրիստ, ցանկանում ես վայե-  
լել բնության բարիքները՝ զուգորդված դեպի վեր  
սլացող բարձրունքների հետ, ապա գնա Արագած:

Տուրիստ, յեթե ցանկանում ես հաղորդակից  
լինել սոցիալիստական հնգամյա պլանները կազ-  
մելուն և խնդիրների լուծմանը, ապա գնա Արագած:

Յեթե դու Արագածն ես բարձրանում Արա-  
րատյան դաշտից, կամ մյուս կողմերից բարձ-  
րանալով արդեն հասել ես բարձրունքներին, առա,  
թե ինչպես առջեղ մի քանի տասնյակ կիլոմետր  
հեռավորության վրա ցցվում ե միայն սրածայր  
Մասիսը, վորը բաղկացած ե լերկ ժայռերից,  
չինկիներից և կամավագաքարերից, — ամբողջու-  
թյամբ Արագածի հակապատկերը: Այդ ե պատ-  
ճառը, վոր ժողովրդական ավանդություններում,  
լեզենդներում Մասիսը միշտ ներկայացված ե  
չար վոգիների բնակավայր, անիծված լեռ, իսկ  
Արագածի գովքը չի պակասում: Մինչդեռ Մա-  
սիսի փեշերին կարելի յե գտնել միայն հատ ու  
կենտ գյուղեր, ընդհակառակը, Արագածի շրջա-  
պատում կամ բազմաթիվ գյուղեր, յերկու հա-  
րյուր հազար բնակչով:

Արագածի տուրիստական հմայքներից մեկն  
ել այն ե, վոր նա միայնակ բարձրանում ե սարա-

հարթում, լայնանիստ եւ և չի կապակցված վորեւեռից լեռան, վորով չորս կողմից կարելի յերածանալ, չորս կողմը դիտել և հեռավոր տարածություններ ընդգրկել:

Սրագածը տուրիստի համար մնում եւ և դեռ կմնա մի առեղծված. Նրա հետ կապվում են յերկրաբանական, հանքաբանական, ջրային, բուսաբանական, կենդանաբանական և այլ բազմաթիվ խնդիրներ:

Սրագածի լանջերին գտնվում են նյութական կուլտուրայի պատմության բազմաթիվ մնացորդներ. այդ լանջերում ՀՄԽՀ Քանենոփոնյան տան ու քոչվորական կենցաղի կողքին կառուցում և սոցիալիզմն ու նոր կենցաղը:

Պետք ե գնալ ու տեսնել, վնասուել ու գտնել այդ ամենը և գյուտարարի հրճվանքով վայելել լեռնային բնության ամբողջ հաճույքը:

Ահա այդ բոլորը նկատի ունենալով, գեպի Սրագած մարշրուտների նպատակադրումն ել ձևակերպել ենք այդ հողի վրա և բաժանել յերեք խմբավորումների:

Յերեք տիպի մարշրուտներն ընդգծելիս, աշխատել ենք ըստ հնարավորության ճանապարհները չկրկնել, իսկ վերջին տիպի համար բավականացել ենք մի մարշրուտով:

## Ա. ՎԵՐԵԼՔԻ ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

Կերելքի մարշրուտների գլխավոր նպատակն ե ծանոթանալ Սրագածի ընդհանուր կազմությանը, ըջապատող սարահարթների և ավելի

հեռու ընկած լեռների ու լեռնաշղթաների կազմությանը, կատարել գավառագիտական ուսումնասիրություններ, վայելել այն հաճույքները, վոր կարելի յերաշով կանաչով ու ծաղիկներով ծածկված մի բարձր սարի վրա: Բացի այդ, վերելքի մարշրուտները սովորեցնում են դժվարությունների գեմ մաքառել ու հաղթահարել:

Վերելքի մարշրուտները կազմված են 2—4 որվա համար. այս մարշրուտների հետ դժվար ե կազմակերպել արագածի յերկրաբանական, բուսական, ջրային և այլ նպատակներ ունեցող գիտահետազոտական արշավները, վորոնք հոգնեցուցիչ են և պահանջում են ավելի յերկար ժամանակ:

Սրագածը դյուրամատչելի լեռ ե, կարելի յերածրանալ շրջակայքի բոլոր բնակավայրերից անխտիր, ուստի և կարելի յերածել հարյուրավոր մարշրուտներ: Մենք բավականացել ենք գծելով վեց գլխավոր մարշրուտ, վորովհետև շրջակայքի բնակավայրերից վեր բարձրացողները բոլորն ել ճանապարհներից վորեւել մեկին:

## Բ. ԳԻՏԱԼԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐԾԱՎ - ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

Այս տիպի մարշրուտների մեջ չկա գագաթ բարձրանալու պայմանը: Մարշրուտ-արշավները կատարվում են Սրագածի լանջերին և նպատակ ունեն նպատակու վորեւել պրոբլեմի լուծմանը:

Գ. ՇՐՋԱԿԱՅՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱ-  
ՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս տիպի մարշրուտները նպատակ ունեն  
ուսումնասիրելու Արագածի շրջակայքում, նրա  
լաճաշերի վրա տեղափորփած բնակավայրերի բը-  
նակչությունը, այդ բնակչության զբաղմունքը,  
կենցաղը, կուլտուրան, ինչպես և հանքային, բու-  
սական հարստությունները, խորհրդային շինա-  
րարությունը և այլն:

ՄԱՐՇՐՈՒՏ Հ 1

Վերելի դեպի Արագածի խառնարանը յեւ  
3-րդ Հառինը

Տեղություն 2 որից վոչ պակաս:

Մարշրուտը կարելի յեւ կազմակերպել միայն  
ամռանը: Չմեռային մարշրուտը կապված է մեծ  
դժվարությունների հետ: Ամենալավ ժամանակը  
ոգոստոս ամսին ե, յերբ ձույնն արդեն հալել ե  
ու վեր բարձրացող արահետները չորացել, յերբ  
որերը յերկար են և ավելի պայծառ: Այս մարշ-  
րուտով կարող են բարձրանալ բոլորը, նույնիսկ  
բարձրակըունկ կոշիկներ հագած կանայք:

Մարշրուտն ոկսվում է Արարանի Ղարաքի-  
լիսա գյուղից, ուր կարելի յեւ գնալ ավտոյով  
(Յերևանից 45 կիլոմետր) և Համամլուից (75  
կիլոմետր):

Ղարաքիլիսայից պետք ե գնալ 5 կիլոմետր  
հեռու գտնվող Ղաղնաֆար գյուղը: Ղաղնաֆա-  
րից վոտով սայլով կամ ձիով բարձրանալ Գեր-

նովիտ կիրճով մինչև Լուկաշին ամառանոցը, ուր  
և գիշերել:

Ցանկացողները կարող են ավելի վեր բարձ-  
րանալ և գիշերել Ճգնավորի բարի տակ: Բայց  
պետք ե ցուրտ գիշերներին դիմանալու պատ-  
րաստություն ունենալ:

Հաջորդ առավոտյան մթնշաղին սկսել բարձ-  
րանալ 3-րդ Հառիճը (Արագածի չորս գագաթնե-  
րից մեկն ե), այդտեղից իջնել խառնարանը, վորը  
գտնվում է մոտ 300 մետր ցած փոսում:

Այդտեղից Գերնովիտի կիրճով իջնել մինչև  
Լուկաշին ամառանոցը և ապա ճանապարհը շե-  
ղելով՝ Թաքառլու լճի վրայով և սարվորների  
վրանների միջով իջնել Թաքառլու գյուղը, այն-  
տեղից ել Ղարաքիլիսա: Ամբողջ ճանապարհը,  
սկսած Ղարաքիլիսայից, կարելի յեւ հաշվել մոտ  
60 կիլոմետր:

Այս մարշրուտի ժամանակը, բացի ընդհանուր  
տեսարաններից, պետք ե ուշադրություն դարձնել  
հետեւյալների վրա.

1. 3-րդ Հառիճի գլխի հարթ տարածությունը  
(վորը կոչվում ե Լուսավորչի կալատեղ) և նրա  
յերկրաբանական կազմությունը:

2. Խառնարանը: Արագածը հանգած հրաբուխ  
ե, այդ պատճառով խառնարանից ծուխ չի բար-  
ձրանում և ավելի խոր խոռոչներ չունի: Խառ-  
նարանը գրեթե ծածկված ե մշտնշենական ձյունով:

3. Հին ժամանակներում գործող հրաբխի զո-  
րությունը, վոր խառնարանից բարեր վեր և նե-  
տել 3—400 մետր բարձրությամբ և խառնարանի  
շուրջը գոյացը և 4 գագաթ:

4. Աեռնային վտակ Գերնովիտը, վոր Արագածի քոչվոր թուրքերը անվանել են Թալի չայ (գիծ գետ) և այն կիրճը, վորի միջով հոսում է այդ վտակը։ Վտակը սկիզբն է առնում ուղղակի խառնարանից։

5. Խառնարանի վերջին արտավիժումներն ու հանքային աղբյուրները։ Խառնարանից դուրս գայու միակ ձեղքը՝ Գերնովիտի կիրճն ե, վորի հենց սկզբին, խառնարանից մի քանի տասնյակ մետր հեռու, կան մաքուր ծծումբի փոքրիկ տարածություններ, ինչպես նաև մի քանի հանքաջրեր իրար կողք-կողքի շարված՝ մի քանի մետր տարածության վրա։

6. Հայաստանի ամենամեծ ջրվեժներից մեկը Արագածի մեծ ջրվեժն է Գերնովիտի կիրճում։ Այստեղ, խառնարանից մի յերկու կիլոմետր ներքեւ իրար են հաջորդում 3 ջրվեժ, վորոնցից միջինն ունի 150 մետր սահանքային վայրեջք և 40—50 մետր բարձրությունից ուղղակի վայր եթափում։

7. Այս մարշրուտի վրա կարելի յե գտնել նյութական կուլտուրայի բավական շատ մնացորդներ։ Դրանցից հիշենք «Մխով» աղբյուրը՝ Արագածի ջրվեժից մի յերկու կիլոմետր ներքեւ այլն։

8. Թաքառու լիճը, վորն իր մեծությամբ Արագածի յերրորդ մեծ լիճն ե, գտնվում է Լուկաշինի ամառանոցից մեկ կիլոմետր հեռու։

9. Խորհրդային կազմակերպված անասնապահությունն ու կոլտնտեսությունները և հին մենատնտեսությունը — սար բարձրացողների տընտեսությունը — ու դրանց հակադրությունը։

10. Խորհրդային գյուղն ու նրա կյանքը ճանապարհի վրա յեղած 4 գյուղերում (Ղարաքիլսա, Ավնագեղ, Ղազնաֆար, Թաքառու)։

11. Նախկին սառցաղաշտերի ավերածություններն ու հետքերը, լատինական «Ո» տառի ձևով բլուրների կազմությունը և սառցային յերկիրը։

12. Հանքային տեսակներն ու բուսական տեսակները Գերնովիտի կիրճում (ներքեակց մինչև խառնարան) և Գերնովիտի կիրճին կից Արագածի լանջերում։

## ՄԱՐՇՐՈՒՏ № 2

Վերելի Արագածի մեծ գագաթը (Հյուսիսային Հառեջը 4096 մետր)

Տևողությունը 2 որ։

Առաջինի պես այս մարշրուտն ել պետք ե կտտարել ամառը՝ ոգոստոս ամսին։

Այս մարշրուտն սկսում է Բաշաբարան գյուղից, ուր կարելի յե գնալ Համամլու կայարանից (60 կիլոմետր) և Ցերևանից (60 կիլոմետր) ավտոյով, իսկեւնինականի գծով — Արթիկ կայարանից (30 կիլոմետր) ձիով, սայլով կամ ավտոյով։

Բաշաբարանից Արագածի լանջերով ուղղակի բարձրանալով հյուսիսային գագաթը, կարելի յե վայրեջք կատարել Քյոռքուլաղում, կամ, քիչ հեռու՝ Հաջի Խալիլ գյուղում, վորտեղից վեց կիլոմետր յետ գնալով՝ Ղանդաղսագ գյուղից կարելի յե վերադառնալ ավտոյով։

Ամբողջ մարշրուտը Բաշաբարան գյուղից  
մինչև խճուղու վրայի Ղոնդաղսաղ գյուղը մոտ  
50 կիլոմետր է: Գիշերելու տեղ կարելի յե գրտ-  
նել միմիայն սար բարձրացողների վրանում: Այս  
մարշրուտի հետաքրքիր մոմենտներն են:

1. Հայաստանի ամենաբարձր գագաթը—Արա-  
գածի հյուսիսային գագաթը (4.096 մետր), վոր-  
տեղից կարելի յե տեսնել Հայաստանի ամբողջ  
լեռնակազմությունը, ինչպես նաև Մեծ Կով-  
կասյան և Փոքր Կովկասյան լեռնաշղթաների ուր-  
վագծումք:

2. Ավելի մոտիկ՝ Փամբակի լեռնաշղթան իր  
Մայմեխ գագաթով:

3. Քասախ գետի ջրավագանը:

4. Բազմաթիվ մանր լճակների գոյացումը  
Արագածի լանջերին և լեռնային հեղեղատների  
սկզբանավորումը: Լեսսինգ լիճը գագաթի ներ-  
քեռում:

5. Արագածի ամենաբարձր գագաթից բաց-  
վող տեսարանը՝ մոտ 400 մետր խորության վրա  
գտնվող Արագածի գլխավոր խառնարանի վրա  
(խառնարան գնալն ավելի հեշտ և № 1 մարշ-  
րուտով):

6. Սար բարձրացողների ու մարշրուտի գծի  
վրա ընկած գյուղերի կենցաղը, կոլտնտեսական  
և խորհրդային շինարարությունը:

7. Արագածի լանջերի քարային տեսակները,  
բուսական հարստությունը և այլն:

8. Նյութական կուլտուրայի մնացորդները,  
որինակ՝ Ղոնդաղսաղի յեղիղական գերեզմանա-  
նոցը և այլն:

## ՄԱՐՇՐՈՒՏ Հ Հ 3

Վերելի դեպի Սեվ լիճը յեվ Արագածի գագաթը  
(արեվմայան յեվ հարթակ-արեվմայան հառեցները)

Տևողություն 2—3 որ:

Այս մարշրուտն ևս ցանկալի յե կատարել  
ովոստոս ամպին: Մարշրուտն սկսվում ե Բյու-  
րակսն գյուղից, ուր կարելի յե գնալ Յերևանից  
մինչև Աշտարակ ավտոյով, իսկ Աշտարակից մինչև  
Բյուրական (10 կիլոմետր)՝ սայլով կամ ձիով:

Մարշրուտն այդտեղից նախ Անրերդի ձորով  
և ապա Արխաշենի ձորակով բարձրանում ե մինչև  
Սև լիճը (Ղարավյոլ), ուր և կարելի յե գիշերել  
ողերևութաբանական կայանում: Այդտեղից չին-  
կիլ քարերի վրայով կարելի յե բարձրանալ նաև  
արևմտա-հարավային (3.916 մետր), ապա արև-  
մտյան (4.018 մետր) գագաթները:

Վայրեջը — Արխաշեն բլուրի հյուսիսային  
կողմից, Մանթաշի ձորի գլխով և Սև լճի հյուսի-  
սային լանջերով, Բագու լճի վրայով իջնել Արթիկ,  
վորտեղ վերջանում ե մարշրուտը:

Մարշրուտի յերկարությունը կազմում ե մոտ  
100 կիլոմետր:

Մարշրուտի ընթացքում կարելի յե տեսնել  
և ուսումնասիրել հետեւյալը:

1. Արարատյան և Շիրակի դաշտերն ու նը-  
րանց յեղերող լեռնաշղթաները:

2. ՀՍԽՀ ամենաբարձր լիճը՝ Աև լիճը և նրա  
կողքին ամենաբարձր հիբրոմետրիկ կայանը:  
Արխաշեն արհեստական ջրանցքը՝ այդ լճի ջուրն  
ոգտագործելու համար:

3. Արագածի յերկրորդ ամենամեծ լիճը՝ Բագու լիճը:

4. Արագածի զույգ գագաթները, այնտեղից ներքև խառնարանի տեսքը:

5. Արագածի կիրճերն ու ձորերը. հյուսիսային, արևմտյան և արևելյան կողերին և լանջերի վրա գտնվող գագաթները՝ Արխաշեն, Ղարադաղ, Մելեռ, Ամբերդ, Գյոլ-Զիարեթ, Վուկեթաս, Ջրգնավոր և այլն: Դրանց հանգած հրաբխի հետքերը:

6. Ղարանղու գետի, Ամբերդ վասակի և մի շարք լեռնային վտակների կազմությունը (Արխաշեն, Դյուզքենդ և այլն):

7. Նյութական կուլտուրայի հսկա կոթողներ՝ Ամբերդ ամբոցը և այլն:

8. Խորհրդային անասնապահական մեծ տնտեսությունները, կողանտեսական անասնապահությունը և քոչվորներ ու այդ բոլորի համեմատությունը:

9. Խորհրդային գյուղն ու նրա կյանքը ձանապարհի վրա դժուգուղ գյուղերում (Բյուրական, Արթիկ և այլն):

10. Արագածի հանքային հարստությունները (տուֆ, պեմզա և այլն):

11. Արթիկ առուֆը, ինդուստրիալ Բանավանը հին գյուղի կողքին ու այդ յերկուսի հակադրությունը:

12. Արթիկ—Սև լիճ — Բյուրական լեռնային ճանապարհը, նրա ռազմական, տնտեսական ու տուրիստական նշանակությունը:

13. Հայ և յեզդի սարվորների կենցաղն ու նրանց կուլտուրան:

14. Բարձր լեռնային բուսականությունը, խաղողի, պտղատու ծառերի և տեխնիկական բույսերի զոնային սահմանները:

15. Հին սառցադաշտերի հետքերը (վոչխարին ճակատները — բարահս լօս) ու նրանց ընդգրկած սահմանները:

#### ՄԱՐՇՐՈՒՏ № 4

Վերելի Սեվ լիճ, առանց գագաթը բարձրանալու

Տեղողությունը ամառ 1 որ, ձմեռը 2 որ:

Այս մարշրուտն № 3 մարշրուտի կրկնողությունն է, միայն թե Սև լճից վեր դեպի գագաթները չի բարձրանում:

Այս մարշրուտն ամբողջությամբ կարելի յեկատարել ձիով, Բյուրականից բարձրանալով մինչև Սև լիճ և այնտեղից իջնելով Արթիկ:

Մյուս մաշրուտներին հակառակ, այս մարշրուտը կարելի յեկատարել տարվա բոլոր յեղանակներին, ձմեռը նաև դահուկներով: Իհարկե ձմեռային մաշրուտն ունի իր յուրահատուկ դրժվարությունները (ձյուն և ցուրտ): Գարնանային (ապրիլ—հուլիս) մաշրուտների հատուկ դժվարությունն է ձյունահալը և ցեխը:

Այս մարշրուտի ժամանակ ևս կարելի յետեսնել այն բոլորը, ինչ վոր կարելի յետեսնել № 3 մարշրուտի ժամանակ, բացառությամբ գագաթը բարձրանալու հաճույքից և Արխաշենի գագաթը (Սև լճի վերևում) ու Արագածի հյուսիսային լանջերի կազմությունը տեսնելուց:

տմի վքոնեամղ զդյամթյամպաստառ վմզյնման  
-տաց վմտմատեակ զտկտթլ ամա կտպվմը մզոց  
-մնտկտատեօդ քտբտոդ լգիպսփ գ ևսմտկ մդյամթյ  
-տանսդա րա զդյամթյամեառ վտաւմձմտը ո՞՛ղ

բազմեալ  
պղցուտսովէան դոկտորացի-ութիւն

Հ Ա ՏՎԱԼՅՈՒԹ

վմզգուսմթյան թյառապատկանի ու վմզգեմանոց  
վմտմատլրսի դոկտըլրամզ քտեզի յրամզատյ վղժ  
-մզգ վմզգուսմթյան նմա մրտ թյառապատկան մմզգուս  
-տման մասն քտինու մտյուչ վմզգուսմթյան ը դ  
Շ ' 1 Ա լզմկոտոցրառա դ լզտվն գմ վլզմտի կոզոյց  
-տր վմսի գ դուրամթյան իվմ ու դոկտընսմբյու  
դոմթյան լզոտոցրառա վմզգուսմթյան վքտեմմը նման  
գ Նվերանզգենաց դոկտըլրա ատց վմզգչզմթյան  
ու վմզգուսմթյան դոկտըլրա ատց վմզգչզմթյան  
մատզրսի օքլ ասյ վցու դուրամթյան որի ը

մղի լզմորտց մարսմեմոր դ պվերացով վզով  
-տմզլ լզովի իսմոմի վերաբե մտֆուկետն դ յրանազ  
-տստրտ զվշտիշակ լզմգլիք մշմտեռպաց լզկող  
-րամու իսքն վարսմեմոր և Ա ուղմագսով լզովի  
-ր զթուեան զտմիզդո լողոմչմու նվեզագմտ  
դ մկացլ եզկոոզլ ևստովվեզոց մեվիո վկոտի  
ձտ վտվիտզմգի լզտաե ժմզգմտ վլոցն լզովից  
իսմղժագ վմզտնեստու ոչի նվեզանիլ  
-տսր վմզտրակեմոժ քտիշոյ յրանամեմոր շ Ա իդժ  
-մղու նվթուեան նմո լզմզնիք դ մթուեան մջմու

~տպզյու զվլտուիրամբ Խոդե խսմզդուու զվլտմգեգք  
վմզդթտետե զմշաղ Շմզդթտետե զտրտարդմու դ  
դուրարդմու-իտմոց խսլուտմջմուու Եվլետնի՛Ռ  
:զզկիու զյլ դ՛ Լզմզնիւ դ Եվկիմմ՛Ռ յուէ  
Եվզոհումրամբ Խոդումջմուու խստամնմոյ չ Ա  
:տվնտոզմյուսի զմզդաւամմոյ  
չ դ չ Շ գ յ րադուվնդոց մտամնմոյ Ո  
:զվլմզդովյու մզմրգտենզո — ոստոսնս Մսոյու  
դմովյու Լզմտտուի զմ Վլզմու մտամնմոյ ո՞Ռ  
:մս դ գ մզրամթեսադՏ

9 № 84012000

ուսիս լգմտտոկ դ յրախմտտողչպոց մորամնմոց  
-ըրա ք Ա արամնմոր լգոզտ զի վլզմտկ  
մսի չով ՛մմանմ զմտ զթզմե լգոզտ զի վլզմտկ  
ողեռոյցրսոյ կտողոյորք վքն զվբոտտամնմոց ո՞՛՛  
-կվթմղ յոտի ոտկոմարք լգոզվ  
ստպց ովքն զվբոտտամնմոց չվլ իգու — Եվիկը  
-մղ լուզովր զվցմտտոտպոց տեսու փսիմոմի վմզեստ  
քտիչսի «սեսկ» դ վմզովիկովշ Եվերսին գոմսի  
վլզմտոյ լուզոմչմտմ գի վլզմտկ ոշումթուկոյ  
-տեղ ոտկոմարք արան վլզիտ փոյս ոժմզմզի ո՞՛՛

մս զ - զ մդրամքյունսդյ

Եվանձաւ վեվլութեազնի

## ॥ ੴ ਸਤਿਗੁਰ ॥

կարելի յե կատարել և մեկ որում և յերեսուն  
որում ու ելի չավարտել։ Կարելի յե բավակա-  
նանալ Ամբերդ ամրոցն այցելելով, բայց և կա-  
րելի յե ընդգրկել Արագածի բոլոր լանջերը։

Հանքային հարստությունների ուսումնասի-  
րության ասպարիզում կարելի յե փնտռել և  
տեսնել պեմզա վոչ միայն Մահմուղջուղում,  
այլև Թալիխում (Բերկու), Աբարանում և այնու-  
նույնը նաև Ոբսիդյանի, Արթիկ տուֆի և այլ  
հանքերի նկատմամբ։

Ալպյան արոտներ, դեղաբույսեր կարելի յե  
ուսումնասիրել ամեն գծով։

Խաղողի, տեխնիկական բույսերի ու պտղա-  
տու ծառերի աճման զոնային բարձրությունները  
կարելի յե ուսումնասիրել թէ Թաքիա-Փարբի,  
թէ Դըղի-Բյուրականի և թէ Կոշ գյուղերի ուղ-  
ղություններով։

Հացահատիկների, զանազան ծաղիկների ու  
խոտաբույսերի աճման զոնային բարձրություն-  
ները կարելի յե ուսումնասիրել Արագածի չորս  
կողմից։

Սաղացաշտերի հետքերը, «Ա» տառի ձեռվ  
բրուրները, վոչխարի ճակատները, կարելի յե գըտ-  
նել և Աբարանի կողմից, և Սև լճի մուտքերում,  
և Մանթաշի ձորի կողքերին։

Հանգած-հրաբուխներն ու նրանց խառնարան-  
ները գիտելու և ուսումնասիրելու համար կարելի  
յե բավականանալ Թալիխի շրջանում գտնվող  
Բերկու գագաթով, կամ բարձրանալ գլխավոր  
խառնարանը և գիտել բոլոր խառնարանները՝ Վոս-  
կեթաս, Բողութիւնի և այլն։

Քոչվորական և սարվորների կենցաղը նույն,  
պես կարելի յե ուսումնասիրել ամեն ուղղությամբ  
ներքակից սկսած մինչև Սև լճի ափերը։

Գիտահետազոտական նպատակները բազմա-  
թիվ են և ամեն մի նպատակադրման ժամանակ  
պետք ե կազմել համապատասխան մարշրուտ,  
վորոշ չափով ոգտագործելով վերոհիշված 1—6  
մարշրուտների առանձին մասերը։

## ՄԱՐՇՐՈՒՏ № 8

Արագածի շրջապատը

Տևողությունը 3—5 որ։

Մարշրուտն սկսվում ե Աշտարակից. մինչև  
այստեղ կարելի յե գնալ ավտոյով։ Ավտոյով կա-  
րելի յե ճանապարհը շարունակել մինչև Ղոնգաղ-  
սաղ գյուղը, այնտեղից ձիռվ գնալ մինչև Արթիկ  
բանավան, ապա շարունակել ճանապարհ՝ Աղիյա-  
ման, Սհաջի, Աղջաղալա, Կոշ, Ուջան, Ագարակ  
գյուղերի վրայով և համեն Աշտարակ։

Ամբողջ մարշրուտն իր զիկզակներով կաղ-  
մում ե մոտ 200 կիլոմետր ճանապարհ։

Այս ճանապարհի վրա յեն գտնվում Աշտա-  
րակ, Մուղնի, Կարբի, Ոհանավանք, Արտաշավան,  
Ալմագեղ, Ղարաքիլիսա, Ալիքուչակ, Բաշ-Աբարան,  
Ղոնգաղսաղ, Մանգյառ, Քարվանսարա, Ներքին  
Գյողալղարա, Նորաշեն, Մեծ Արըխվալի և Փոքր  
Արըխվալի, Բաշգյուղ, Ղիչաղ, Արթիկ, Մահմուղ-  
ջուղ, Շիրվանջուղ, Սոգյութլու, Ահազի, Ղուլ-  
դարվիշ, Ղարաղոյմաղ, Ներքին Աղջաղալա, Կոշ,  
գարվիշ, Ղարաղոյմաղ, Ներքին Աղջաղալա, Կոշ

Ուջան, Ագարակ, թվով 29 բնակավայր: Ճանապարհը մի քիչ զիկզակով կատարելիս կարելի յայցերել ավելի քան վաթուուն բնակավայր:

Այս մարշը տալիս ե հարուստ տպակ բություններ Արագածի շրջապատում բնակվ քնակչության ժողովրդագրության, հին և ն կենցաղի, քսենոփոնյան տան կողքին նրան հ կագիր խորհրդային շինարարության, Արագա ջրային, բուսական, հանքային հարստությու ների, նյութական կուլտուրայի բազմաթիվ հո շարձանների և այլնի մասին:

Տուրիստը հնարավորություն ունի բազմ  
կողմանիորեն ուսումնասիրել իրեն հետաքրքր  
վորեև հարցը և կամ ստանալ ընդհանուր տպ  
վորություններ:

Սյսպիսի շրջագայության ժամանակ կարե  
յե հավաքել նաև ազգաբնակչության մեջ դեռ  
կենդանի մնացած բոլոր լեզենդներն ու ափա  
ղությունները Արագածի մասին և ձատել Արա  
գածի ու շրջագատի տեղագրական անուններ

Բավկանանում ենք այս ութ մարզուտ  
Տուրիստների խմբակներն Արագածին և վիրշա-  
պայլ ուսումնասիրությունների հիման վրա կար-  
են կազմել նորանոր մարզուտներ։



Պատասխանաւոր Խմբագիր Դ. Սարյան, Լեզվական Խմբագիր Արք. Ալուստամյան, Տեխնիկական Խմբագիր Հ. Տեր-Դավթյան, Սրբագրիչ Մ. Գևորգյան, Հանձնման և արտադրաւրյան 28/VII 1934 թ. Ստորագրված և տպելու 29/VIII 1934 թ. Ստատորմար Բ6-125×170 Հատարակ. № 3001 Դավթյան 341. Պատմեր № 3377 Տիրած 300

Тип. им. Стакки 1902 г. АЧКПТ Ростов-Дон

# ԵՐԵՎԱՆԻ ՏԵՂՄԱՆԻ

Սույնուսական ձևապահ ԴՆ

Կառավար 4 կմ



ԳԻՒՐ 40 ԿՈՊԵԿ

F 20

З. КОРКОТЯН

# МАРШРУТЫ АРАГАЦА



АРМЕНГИЗ — ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան



NL0317114

10213